

անցեալ զՎասսուլուրական քաղաքաւն եկն ի
Թաւրէզ. եւ անտի ի հայրենի աշխարհ իւր,
ի գաւառն Սիւնեաց ի վանքն Տաթեւու»
(Դաւր. 287) :

1612ին պատահած էր Մովսէսի, որ տա-
կաւին արեղայ էր, Գրիգոր Դարանաղցի ի
Կ. Պոլիս. իսկ 1613ին Ապրիլին Երուսաղէմէն
դարձին հանդիպած էր Մովսէս Աւետիս կա-
թողիկոսին. նոյն տարւոյն վերջերը կը գրա-
նենք զինքը Տաթեւ. ուստի չկայ միջոց «ամս
ինչ» ինքնագլուխ քարոզութեամբ շրջելու :

Առաքել հոս հաւանօրէն իրեն ազբիւր
ունեցած է Ղուկաս Գառնեցւոյ Յիշատակա-
րանը, ուր կ'ըսուի. «Յեա փոխելոյ նորա
(Սրապիոնի) գաւազան իշխանութեան համ-
չիրաքն իւր Գրիգոր վարդապետն Կեսարեան,
զոր ի սոյն ժամանակս սայ է հռչակեալ եւ
անուանի զիտնական եւ րասդոն արտաքին
իմաստասիրական հանճարոյ, այլ եւ աստուա-
ծաշունչ գրոց : Սայ բոտեալ եւ հաւանեալ
ինամոցն Աստուծոյ, ետ սմայ գաւազան վար-
դապետական ի տիեզերական քաղաքն ի Կոս-
տանդնուպօլիս : Եւ իբրեւ էառ սուրբ հայրս
մեր զեկլէսիաստական իշխանութիւնն, սկսաւ
քարոզել զբանն Աստուծոյ ընդ ամենայն տե-
ղիս. եւ հասեալ շրջադայութեամբ յարեւելս
ի բնիկ գաւառն իւր Սիսական» : Այս տողերը
կ'երեւայ թէ ընդլայնած է Դաւրիժեցի :

Աւետիս կաթողիկոս 1613ին հրաւիրուած